# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 փետրվարի 2025թ. թիվ 92-Ա

ԱՆԻԿ ՂՌԱԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 30.01.2025թ. թիվ 02/09.1/2580-2025 գրությունը և հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա.Ղռաթյանի 11.02.2025թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ու մ  եմ.

1. Աշխատանաքային պարտականությունները ոչ լիարժեք կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ա.Իսահակյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ա.Ղռաթյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Մատինյանին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2025թ. փետրվարի 17
ք.Վանաձոր